

Նոնա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Երևանի պետական համալսարան

ԹԵՐԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԼԵԶՎԻ ՄԵԶ. ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Սույն հոդվածի նպատակն է քննության առնել թերասություն լեզվական երևոյթը, նրա դերը ու նշանակությունը լեզվի մեջ: Փորձ է արվել ներկայացնել թերասությունների տումնասիրությամբ գրաղվող տարրեր գիտնականների կողմից առաջ քաշված մոտեցումները այս լեզվական ուսումնական մասին, բացահայտել կատարված եղանակումների ընդհանրությունները՝ միաժամանակ վեր հանելով յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

Բաճակի բառեր. հաղորդակցական ուսումնական գործառույթ իրականացնող բառեր, թերասություններ, անորոշություն, կասկած, բաղադրավարություն, մեղմացում

Հայտնի է, որ լեզուն ճշգրիտ համակարգ է, և խոսքի մեջ անորոշությունը, անվճռականությունը կարող են համարվել թերություն: Սակայն որոշ լեզվաբանների մոտ այս գաղափարը քննադատության է արժանացել հիմք ընդունելով այն, որ լեզվի ճշգրիտ և հստակ կիրառությունը ոչ միշտ կարող է լինել արդյունավետ: Ավելին, նրանք գտնում են, որ լեզվին որոշակի անորոշություն, անվճռականություն հաղորդելով դրա կարևոր առանձնահատկություններից մեկն է /Stubbs, 1986; Myers, 1989; Channell, 1994; Dubois, 1987/:

Տարբեր համատեքստերում խոսողը իր խոսքը կազմում է այնպես, որ այն արդյունավետ կերպով ծառայի իր հաղորդակցական նպատակներին: Հետազոտությունները ցույց են տվել, որ լեզվում գոյություն ունեն բառեր և արտահայտություններ, այսպես կոչված թերասություններ (hedges), որոնց միջոցով խոսողը կարող է արտահայտել իր վերաբերմունքը տվյալ ասույթի վերաբերյալ՝ խոսքին հաղորդելով անորոշություն, կասկած և այլն: Թերասությունները հաղորդակցական ուսումնական գործառություններ են, որոնց միջոցով խոսողը մեղմացնում է իր խոսքը, ներկայացնում իր պահանջները գգուշությամբ՝ դրանք դարձնելով ավելի ընդունելի միջանձնային հարաբերություններում: Ինչպես նշվել է, թերասությունները խոսքին հաղորդում են անորոշություն, անվճռականություն, կասկած: Ավելին, դրանց միջոցով հեղինակը կարող է նվազեցնել իր պատասխանատվությունը հաղորդվող տեղեկության նկատմամբ: Թերասության կիրառությունը լեզվի մեջ պայմանավորված է անհատի լեզվական գիտելիքներով, տվյալ համատեքստով և խոսքային իրադրությամբ, ինչպես նաև խոսողի մտադրությամբ:

Լեզվաբանության մեջ Ու. Վայնրայխը առաջինն էր, ով ի հայտ թերեց թերասության նշանակալի դերը խոսքում: «Անգերենի իմաստային կառուցվածքի վերաբերյալ» իր հայտնի հոդվածում նա անդրադառնում է թերասություններին՝ անվանելով դրանք մետալեզվական գործառույթ իրականացնող բառեր (metalinguistic operators): Հեղինակը նշում է, որ «ցանկացած լեզվում մետալեզվական գործառույթ իրականացնող բառերը,

ինչպես օրինակ անզերենում true, real, so-called, strictly speaking և like բառերը, կիրառվում են որպես ուղղորդող, խթանող բառեր (instructions) տվյալ տեղեկության ավելի լայն կամ ավելի նեղ մեկնաբանության համար» /Weinreich, 1966: 169/:

Թերասություն եզրույթը լեզվաբանության մեջ առաջին անգամ հանդիպում ենք Զ. Լեյկոֆի աշխատություններում, որոնք էլ հիմք հանդիսացան այդ եզրույթի հետագա զարգացման և ուսումնասիրության համար: Զ. Լեյկոֆի ուսումնասիրությունները գլխավորապես հիմնված են Լ. Զադեհի և Է. Ո-ոչի տեսությունների վրա:

Լ. Զադեհը առաջ է քաշում է իր՝ այսպես կոչվող անորոշ խմբերի տեսությունը (fuzzy set theory), որի գլխավոր գաղափարը հետևյալն է. առարկաները, անձերը չունեն անդամակցության հստակ սահմանված չափանիշներ և տվյալ անձը կամ առարկան ոչ թե պատկանում է կամ չի պատկանում տվյալ խմբին, այլ ներառված է դրա մեջ որոշակի աստիճանով: Ըստ նրա՝ անորոշ խումբը առարկաների դասակարգ է, որն ունի անդամակցության աստիճանի շարունակականություն: Օրինակ՝ John is tall. նախադասության մեջ բարձրահասակ լինելը հարաբերական է այն իմաստով, որ գաճաճների և բարձրահասակների շրջանակներում այն ընկալվում է լիովին տարբեր կերպ /Zadeh, 1965/:

Ըստ Է. Ո-ոչի հայտնի նախատիպերի տեսության (prototype theory)՝ ցանկացած առարկա պատկանում է որոշակի իմաստային կարգի, սակայն «մերկայացնում է» այն տարբեր աստիճաններով: Օրինակ՝ նա առաջարկում է դասակարգել բոչունները՝ ըստ դրանց՝ կատարելապես բոչունների դասին պատկանելու աստիճանի և գալիս է այն եզրակացությանը, որ շիկահավը բոչունների դասի ավելի բնորոշ ներկայացուցիչ է, քան այնպիսինը: Ելնելով իրականցված դասակարգումներից՝ Է. Ո-ոչը տարբերակում է տվյալ կարգի կենտրոնական անդամներ՝ դրանք անվանելով նախատիպեր կամ նախատիպային անդամներ, ինչպես նաև երկրորդական անդամներ, որոնք տվյալ կարգին ոչ այնքան բնորոշ ներկայացուցիչներ են: Այսպիսով, նրա տեսությունը ցույց է տալիս, որ անդամակցությունը տվյալ կարգի աստիճանին առնչվող խնդիր է /Rosch, 1973/:

Հիմնվելով վերը ներկայացված գիտնականների կողմից առաջարրված տեսությունների վրա՝ Զ. Լեյկոֆը գալիս է այն եզրակացությանը, որ նախադասությունները լինում են ոչ թե ճիշտ, սխալ կամ անիմաստ, այլ դրանք համարվում են ճիշտ կամ սխալ որոշակի չափով, կամ ճիշտ որոշակի իմաստով և սխալ մեկ այլ իմաստով: Նա թերասությունները դիտարկում է որպես «քառեր, որոնք իմաստները դարձնում են ավելի խճճված կամ ավելի են պարզեցնում դրանք» /Lakoff, 1972: 195/:

Հարկ է նշել, որ թերասության հասկացությը լեզվաբանության մեջ բազմաթիվ փոփոխություններ է կրել: Սկզբնական շրջանում այն ուսումնասիրվել է բացառապես իմաստաբանության դիտանկյունից, հետագայում թերասություն եզրույթը լայն կիրառություն ունեցավ գործաբանության մեջ: Գիտնականները ամենատարբեր մոտեցումներն են ցուցաբերում այս լեզվական ուսումնասիրության շուրջ՝ տալով տարբեր, երբեմն նաև հակասական բնորոշումներ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թերասությունները

կիրառվում են տարբեր նպատակներով: Քննարկենք դրանք՝ առանձնացնելով երեք հիմնական գործառույթ:

1. Թերասությունները՝ որպես անորոշության արտահայտման միջոց

Խոսքը միտումնավոր անորոշ դարձնելը դիտարկվում է որպես հաղորդակցական ունակության կարևոր գործոն: Խոսքը համարվում է անորոշ այն դեպքում, եթե տվյալ տեղեկությունը չի պարունակում ակնկալվող ճշգրտություն: Հաղորդակցության ընթացքում խոսողը, ենելով իր հաղորդակցական նպատակներից, երբեմն կիրառում է այնպիսի արտահայտություններ, որոնք անորոշ են թողնում տվյալ առարկայի ճշգրիտ որակը, քանակը, ինքնությունը և այլն: Խոսքը անորոշ դարձնելու վառ միջոց են թերասությունները, որոնք լեզվում կիրառվում են խոսքին նպատակային անորոշություն հաղորդելու համար: Նմանատիպ թերասությունների օրինակներ են աbout, a sort of, a kind of, somewhat, almost և այլն: Խոսողը խոսքը միտումնավոր կերպով դարձնում է ոչ հստակ, եթե նա խոսում է խնդիրների մասին, որոնք կարող են առաջացնել հակասական արձագանքներ, ինչպես նաև եթե խոսողը վստահ չէ ներկայացված փաստերի ճշգրիտ լինելու վրա:

Թերասությունները, որպես խոսքին անորոշություն հաղորդելու միջոց, մանրամասն ուսունասիրվել են Զ. Չենըի կողմից: Ինչպես արդեն նշել ենք, նա քննադատում է այն միտքը, որ լեզվի կիրառությունը պետք է լինի հստակ և պարզ՝ պնդելով, որ անորոշությունը լեզվի հիմնական առանձնահատկություններից մեկն է: Ըստ Զ. Չենըի՝ խոսքը անորոշ դարձնելը չի կարող համարվել լավ կամ վատ: Էական է, որ անորոշ, անվճռական խոսքը ճիշտ կերպով ծառայի խոսողի հաղորդակցական նպատակներին: Նա առաջ է քաշում այն դրույթը, որ խոսքին անվճռականություն հաղորդելու կարողությունը տվյալ համատեքստում կախված է խոսողի հաղորդակցական ունակություններից: Անորոշության մասին խոսելիս գիտնականը մեծ կարևորություն է տալիս համապատասխանությանը՝ եթե լեզվի կիրառությունը համապատասխանում է լեզվաբանական և սոցիալ-լեզվաբանական ակնկալիքներին /Channell, 1994/:

Սի շարք գիտնականներ առանձնացնում են անորոշություն հաղորդող թերասությունների տարրեր տեսակներ:

Այսպես, Է. Փրիմսը, Զ. Ֆրեյթերը և Զ. Բուվը տարբերակում են անորոշության երկու տեսակ՝ անորոշություն, որն արտահայտվում է տվյալ ասույթի բովանդակության մեջ և անորոշություն, որն առկա է տվյալ ասույթի բովանդակության և խոսողի միջև, այսինքն, այս դեպքում նկատվում է խոսողի վերաբերմունքը հաղորդվող տեղեկության ճշգրիտ լինելու նկատմամբ: Անորոշության առաջին տեսակը նրանք անվանում են մոտարկիչներ (approximators), որոնք իրենց հերթին բաժանվում են երկու մասի՝ հարմարեցնող բառեր (adaptors) և ամբողջացնող բառեր (rounders): Հարմարեցնող բառերը համապատասխանեցնում են արդեն իսկ գոյություն ունեցող հասկացույթը նոր եզրույթի հետ: Նմանատիպ թերասությունների օրինակեր են՝ a sort of, almost, somewhat, a little bit և այլն: Այսպես կոչված ամբողջացնող բառերը նատանանում են մոտավորություն, ոչ ճշգրտություն, օրինակ՝ about, approximately, something around և այլն: Անորոշության երկրորդ տեսակը նրանք անվանում են պաշտպանիչներ (shields), որոնք փոփոխության են ենթարկում տվյալ բովանդակության և խոսողի միջև հարաբերությունը: Տարբերակվում են

պաշտպանիչների երկու տեսակ՝ իրական պաշտպանիչներ (plausibility shields), որոնք արտահայտում են կասկած, օրինակ՝ I think, as far as I can tell և այլն, ինչպես նաև վերագրող պաշտպանիչներ (attribution shields): Դրանք տվյալ տեղեկության պատասխանատվությունը վերագրում են ոչ թե խոսողին, այլ որևէ երրորդ անձի), օրինակ՝ according to her estimates, presumably և այլն /Prince, Frader, Bosk, 1982/:

Նմանատիպ դասակարգում է առաջարկում նաև Ա. Հյուրլերը: Նա տարբերակում է անորոշություն հաղորդող բառերի երկու տեսակ՝ բուն թերասություններ (hedges) և նվազեցուցիչներ (understatements)՝ նվազեցուցիչները դիտարկելով որպես ընդհանուր եզրույթ անորոշություն հաղորդող բառերի երկու տեսակների համար: Միևնույն ժամանակ նա մատնանշում է, որ թե՛ թերասությունները, և թե՛ նվազեցուցիչները կատարում են միևնույն գործառույթը՝ արտահայտում են անորոշություն, նախադասությունները դարձնում ավելի ընդունելի խոսակցի կողմից՝ այդպիսով մեծացնելով դրանց հավանության արժանանալու հնարավորությունը: Ըստ Հյուրլերի՝ նվազեցուցիչները արտահայտում են անորոշություն, որն առնչվում է տվյալ նախադասության բովանդակությանը: Օրինակ՝ It is a bit cold in here. նախադասության մեջ ա բիտ բառն ունի նվազեցուցիչի գործառույթը: Մինչդեռ թերասությունների կիրառության դեպքում առկա է նաև խոսողի վերաբերմունքը տվյալ տեղեկության նկատմամբ: Օրինակ՝ I think it is the right time to leave for there. Այս նախադասության մեջ I think արտահայտությունը համարվում է թերասություն /Hübler, 1983/:

Չուզահեռներ անցկացնելով ներկայացված դասակարգումների միջև՝ կարելի է ասել, որ Է. Փրինսի, Զ. Ֆրեյդերի և Չ. Բուկի կողմից առաջադրված «մոտարկիչները» համապատասխանում են Ա. Հյուրլերի ներկայացրած «նվազեցուցիչներին», մինչդեռ «պաշտպանիչները» համապատասխանում են «քերասություններին»: Հարկ է նաև նշել, որ այս գիտնականների հետազոտությունները զիսավորապես հիմնված են Զ. Լեյկոֆի՝ թերասությունների վերաբերյալ սկզբնական ուսումնասիրությունների և եզրահանգումների վրա, սակայն եթե Զ. Լեյկոֆը թերասությունները դիտարկում է որպես բառեր, որոնք պարզեցնում կամ ավելի են բարդեցնում իմաստը, վերոհիշյալ գիտնականները թերասությունները համարում են տվյալ նախադասության իմաստը ավելի բարդեցնող միջոցներ:

2. Թերասությունները՝ որպես քաղաքավարության դրսևորման միջոց

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ թերասությունները կարևոր դերակատարություն ունեն խոսքը քաղաքավարի դարձնելիս: Իրենց հայտնի քաղաքավարության տեսությունում Պ. Բրաունը և Ս. Լիմանը տարբերակում են քաղաքավարության երկու տեսակ՝ դրական (positive politeness) և քացասական (negative politeness): Դրական քաղաքավարություն դրսևորելիս խոսողի ցանկությունը կամ կարծիքը որոշ չափով համընկնում է խոսակցի տեսակետի հետ: Նման դեպքերում խոսողը զիսավորապես բախվում է խոսակցի «դրական դեմքին»: Բասացական քաղաքավարությունը ընկալվում է որպես գործողություն, որն ուղղված է խոսակցի «քացասական դեմքին»: Քացասական քաղաքավարություն դրսևորելիս խոսողը իր խոսքը կազմում է

ազատ՝ միաժամանակ մեղմացնելով այն՝ խոսակցի հետ հնարավոր տարակարծություններից խոսափելու համար:

Պ. Բրաունի և Ս. Լիհնսոնի տեսությունը գիշավորապես հիմնված է դեմքի գաղափարի վրա: Ըստ նրանց՝ թերասությունները խոսքի մեջ կիրառվում են դեմքի նկատմամբ վտանգը նվազեցնելու, տարակարծությունից խոսափելու նպատակով: Թերասությունները համարվում են բացասական քաղաքավարության ու ազմավարություններ, քանի որ դրանց միջոցով հնարավոր է դառնում նվազեցնել այն խոսքային իրադրությունների ուժը, որոնք կարող են խոսակցի հետ կոնֆլիկտներ ստեղծել: Այնուամենայնիվ, թե բացասական, և թե դրական քաղաքավարություն դրսորելիս նպատակը մեկն է՝ փրկել կամ խոսողի, կամ լսողի դեմքը /Brown & Levinson, 1987/:

Ըստ Ռ. Մարկկանենի և Հ. Շրոյդերի՝ սեփական դեմքը փրկելու անհրաժեշտությունը առաջնային է խոսքի մեջ թերասություններ կիրառելու համար: Թերասությունները խոսող-խոսակցից, գրող-ընթերցող հաղորդակցության արդյունք են և իմաստավորվում են միմիայն ընթերցողի մոտ առաջացող պատասխանի միջոցով /Markkanen & Schröder, 1988/:

Ինչպես Պ. Բրաունը և Ս. Լիհնսոնը, Զ. Մայերսը ևս թերասությունները դիտարկում են որպես բացասական քաղաքավարություն արտահայտելու միջոցներ: Ըստ նրա՝ խոսողը բախվում է խոսակցի բացասական դեմքին այն դեպքում, եթե նա հնարավորություն չի տալիս խոսակցին ունենալ գործողության ազատություն՝ առաջ տանելով իր պահանջները և ստիպելով ընդունել դրանք: Վեելին, Զ. Մայերսը ենթադրում է, որ անհրաժեշտ է պահանջները ներկայացնել այնպես, որ խոսակցը ազատ լինի դրանց մեկնաբանության մեջ: Գիտնականը առաջ է քաշում այն միտքը, որ թերասությունների կիրառությունը դառնում է պարտադիր այն դեպքում, եթե խոսողը ցանկանում է ինչ-որ բան առաջարկել՝ նշելով, որ այն թերասությունները, որոնք մատնանշում են խոսողի և խոսակցի կամ գրողի և ընթերցողի միջև հարաբերությունները, քաղաքավարություն արտահայտող թերասություններ են /Myers, 1989/:

Ըստ Ա. Հյուլերի՝ թերասությունների միջոցով խոսողը նվազեցնում է մերժման վտանգը: «Թերասությունները նախադասությունները դարձնում են ավելի ընդունելի և այդպիսով մեծացնում խոսակցի կողմից հաստատվելու հավանականությունը» /Hübler, 1983: 23/: Ա. Հյուլերը ենթադրում է, որ որքան աննկատ են կիրառվում դեմքը փրկելու ու ազմավարությունները խոսքում, այնքան ավելի արդյունավետ են դրանք ծառայում իրենց հաղորդակցական նպատակներին:

3. Թերասությունները՝ որպես խոսքի մեղմացման միջոց

Սի շարք գիտնականներ թերասությունները դիտարկում են որպես խոսքը մեղմացնելու միջոցներ, որոնք նվազեցնում են խոսքային իրադրության հնարավոր բացասական ազդեցությունը և քույլ են տալիս խոսողին խոսափելու հնարավոր անքարյացակամությունից կամ կոնֆլիկտներից: Ըստ Բ. Ֆրեյզերի՝ «մեղմացումը ու ազմավարությունը է, որը նվազեցնում է այն խոսքային իրադրության ուժը, որի հետևանքները ոչ ցանկալի են ունկնդրին» /Fraser, 1980: 342/: Նա առանձնացնում է մեղմացման երկու տեսակ՝ ինքնասպասարկող (self serving) (առաջանում է ինքն իրեն անհարմարություն պատճառելու մտքից) և

ալտրուիստական (altruistic) (մյուսներին անհարմարություն պատճառելու վախից): Բ. Ֆրեյգերը ենթադրում է, որ թերասությունները չեն նույնացվում մեղմացման հետ, այլ դրանց միջոցով հնարավոր է դառնում մեղմացնել խոսքը:

Ք. Հայլենդը թերասությունները դիտարկում է որպես ցանկացած լեզվական միջոց, որը մատնանշում է կամ տվյալ ասույթի ճշմարիտ լինելու նկատմամբ խոսողի լիակատար պատասխանատվության բացակայություն կամ տվյալ տեղեկությունը վճռական կերպով չարտահայտելու ցանկություն: Թերասությունների վերաբերյալ այս բնորոշումից կարող ենք ենթադրել, որ Ք. Հայլենդը դրանք համարում է ոչ միայն խոսքը մեղմացնելու, այլև խոսքին անորոշություն հաղորդելու միջոց: Նրա համոզմամբ թերասությունների միջոցով գրողը կարող է ներկայացնել տվյալ տեղեկությունը ոչ թե որպես փաստ, այլ որպես կարծիք /Hyland, 1998/:

Մեղմացնող մեխանիզմների իր դասակարգումն է առաջարկում Կ. Կաֆֆին: Այն հիմնված է տվյալ ասույթի երեք բաղադրիչների վրա, որոնց առկայության դեպքում հնարավոր է խոսքը մեղմացնել՝ նախադրույթ (proposition), խոսքային ոճ, որը կիրառվում է նպատակային գործողության համար (illocution) և ասույթի աղբյուր (utterance source): Նա մեղմացնող միջոցները համապատասխանաբար անվանում է խառը բառեր (bushes), թերասություններ (hedges) և պաշտպանիչներ (shields):

Ըստ Կ.Կաֆֆիի՝ խառը բառերը արտահայտություններ են, որոնք նվազեցնում են տվյալ ասույթի բովանդակության նկատմամբ պատասխանատվությունը և կարող են անորոշություն հաղորդել դրա մեկնաբանությանը, ինչպես նաև ազդել տվյալ տեղեկության իրական մեկնաբանության վրա (*almost, about, probably*): Թերասությունները, ըստ նրա, ներառում են խոսքային իրադրության իլլոկուտիվ ուժի շրջանակը, այսինքն, դրանց միջոցով խոսողը հնարավորություն է ստանում խոսակցին ճշգրիտ կերպով հաղորդել տվյալ ասույթի իմաստը (*I think, I guess*): Թերասությունները մեղմացնում են տվյալ ասույթի ուժը՝ նվազեցնելով խոսողի պատասխանատվությունը: Մյուս կողմից, պաշտպանիչները թույլ են տալիս խուսափել տվյալ ասույթի նկատմամբ խոսողի վերաբերմունքից և գերծ մնալ պատասխանատվությունից՝ ներկայացնելով մեկ այլ խոսողի (*according to her estimates, as she suggests*) /Caffi, 2007/: Կ.Կաֆֆիի ներկայացրած մեղմացնող միջոցները, ինչպես նաև Է.Փրինսի, Զ.Ֆրեյդերի և Չ.Բուլի առաջադրած անորոշություն արտահայտող միջոցները ընդհանուր առմամբ արտահայտում են միևնույն գաղափարը: Սիաժամանակ նշենք, որ Կ.Կաֆֆիի դասակարգման մեջ չի նկատվում հստակ տարանջատում, ինչպես օրինակ Է.Փրինսի, Զ.Ֆրեյդերի և Չ.Բուլի ներկայացրած մոտարկիչները, որոնք առնչվում են իմաստաբանությանը և պաշտպանիչները, որոնք առնչվում են գործաբանությանը:

Այսպիսով, կարող ենք եզրահանգել, որ թերասությունները նշանակալից դերակատարություն ունեն խոսքի մեջ՝ դրանց միջոցով խոսողը խոսքը կարող է դարձնել ավելի ընդունելի խոսակցի համար, խոյս տալ հնարավոր տարակարծություններից, դրսողել քաղաքավարություն, խոյսափել տվյալ տեղեկության նկատմամբ պատասխանատվությունից և այլն: Ոսումնասիրությունները նաև ցույց են տալիս, որ թերասությունները գլխավորապես կիրառվում են որպես խոսքը անորոշ դարձնելու, քաղաքավարություն դրսողելու, ինչպես նաև խոսքը մեղմացնելու միջոցներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Brown P., Levinson S. Politeness. Some universals in language usage. Cambridge: Cambridge University Press, 1987.
2. Caffi C. Mitigation. Amsterdam: Elsevier, 2007.
3. Channell J. Vague language. Oxford: Oxford University Press, 1994.
4. Dubois B. L. Something in the order of around fourty-four: imprecise numerical expressions in biomedical slide talks // *Language in Society*, vol. 16, 1987.
5. Fraser B. Conversational mitigation // *Journal of Pragmatics*, vol. 4, 1980.
6. Hübner A. Understatements and hedges in English. John Benjamins Publishing, 1983.
7. Hyland K. Hedging in scientific research articles. Amsterdam: John Benjamins Publishing, 1998.
8. Lakoff G. Hedges: A study in meaning criteria and the logic of fuzzy concepts // *Chicago Linguistic Society Papers*, vol. 8, 1972.
9. Markkanen R., Schröder H. Hedging as a translation problem in scientific texts // Laurén C., Nordman M. (eds.) *Special languages: from humans thinking to thinking machines*. Clevedon/Philadelphia: Multilingual Matters, 1988.
10. Myers G. The pragmatics of politeness in scientific articles // *Applied Linguistics*, vol. 10, 1989.
11. Prince E., Bosk C., Frader J. On hedging in physician-physician discourse // Robert J. Di Pietro (ed.) *Linguistics and the professions*. Norwood, N.J.: Ablex, 1982.
12. Rosch E. Natural categories // *Cognitive Psychology*, vol. 4, 1973.
13. Stubbs M. A matter of prolonged field work. Notes towards a modal grammar of English // *Applied Linguistics*, vol. 7, 1986.
14. Weinreich U. On the semantic structure of English // Greenberg J. H. (ed.) *Universals of language*, 2nd edition. Cambridge, MA: MIT Press, 1966.
15. Zadeh L. Fuzzy sets // *Information and Control*, vol. 8, 1965.

Н. АРУТЮНЯН – Роль хеджирования в языке: разные подходы. –

Целью данной статьи является обсуждение термина «хеджирование», его роль и значение в языке. В статье представлены различные подходы к этой языковой стратегии, выделены основные особенности, раскрыто содержание работ ученых, занимающихся этой проблематикой. Исследование показывает, что хеджирование используется для различных целей. Различаются три основные функции: в основном оно используется для того, чтобы выразить неопределенность, вежливость, а также для смягчения речи.

Ключевые слова: коммуникативная стратегия, металингвистические операторы, хеджирование, неуверенность, сомнение, вежливость, смягчение высказывания

N. HARUTYUNYAN – *The Role of Hedges in Language: Different Approaches.* – The aim of the present paper is to study the term “*hedging*”, to find out its role and significance in language use. An attempt is made to introduce different approaches towards hedges brought by various scholars who carried out studies on this linguistic strategy, to reveal the generalizations of the conclusions, at the same time singling out specificities of each to the approach. The study shows that hedges are used for various purposes. Three main functions are differentiated: hedges used to express vagueness, to display politeness, to mitigate speech

Key words: communicative strategy, metalinguistic operators, hedges, uncertainty, doubt, politeness, mitigation of speech